

ՀԱՅՅՈՒՆԱՐԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ
ԼԵՋԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լ. Հ. ՂԱԶԱՆՅԱՆ

Սովետական շրջանում հայ լեզվաբանական միտքը զարգացման մի նոր աստիճանի հասավ: Այս շրջանի հետ է կապված լեզվաբանության նոր բնագավառների (հատկապես հնչյունաբանության և հնչյութաբանության՝ որպես լեզվաբանության առանձին բաժինների) առաջացումը և զարգացումը, ինչպես նաև լեզվական նյութի նկատմամբ նորագույն եղանակների կիրառումը: Լեզվի հնչյունական համակարգի տարբեր բնույթի ուսումնասիրություններում տեղ գտան հնչյունաբանական և հնչյութաբանական բազմաթիվ հասկացություններ արտահայտող նոր տերմիններ, որոնց համառոտ քննությանն էլ նվիրված է այս հոդվածը¹:

Սովետահայ լեզվաբանության մեջ հնչյունաբանության և նրա մասերի անվանումների հարցում առանձին լեզվաբանների մոտ որոշ տարբերություն է նկատվում²:

Ժամանակակից հայ լեզվաբանություն մեջ այս բաժինը որակված է հնչյունաբանություն ընդհանուր անվանումով, որի փոխարեն Մ. Աբեղյանը գործածում է հնչաբանություն տերմինը³, Իսկ Հր. Աճառյանը նախընտրում է ձայնագիտություն և ձայնաբանություն տերմինները. «Մենք հարմար համարեցինք այս գիտության բոլոր ճյուղերի համար միասնական Ձայնագիտություն անունը, նրա բնախոսական մասը կոչել Ձայնախոսություն: Իսկ պատմական (քերականական) մասը՝ Ձայնափոխություն»⁴:

Գ. Ղափանցյանը չի ընդունում հնչաբանություն, ձայնագիտություն տերմինները և առաջարկում է գործածել հնչյունաբանությունը⁵:

Ժամանակակից հայ լեզվաբանական գրականության մեջ տեղ գտած հնչյունաբանության մասերի անվանումներից կարելի է հիշատակել արտասանական հնչյունաբանություն և ձայնաչին հնչյունաբանություն տերմինները:

¹ Հնչյունաբանական տերմինաբանության ուսումնասիրության մասին տե՛ս նաև՝ Т. А. Ганиева, О системе фонетической терминологии, Современная русская лексикология, М., 1966, стр. 78—86, В. С. Минавичев, Фонетическая терминология в трудах И. А. Бодуена де Куртене, Лингвистическая терминология и прикладная топонимастика, М., 1964, стр. 7—30.

² Հայ հին քերականները գործածում են նաև տառագիտություն, գրակազմություն տերմինները: Հայերենի հնչյունաբանական (և ընդհանրապես ամբողջ քերականագիտական) տերմինաբանության ստեղծման պատմության մասին տե՛ս Ա. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 180—203:

³ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 69:

⁴ Տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1971, էջ 10:

⁵ Տե՛ս Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, էջ 43:

Հնչյունաբանության հիշյալ հրկու մասերը պրոֆ. Էդ. Աղայանը անվանում է մեկ ընդհանուր տեղամիևով՝ հնչյունախոսություն⁶:

Հնչյունական համակարգի ուսումնասիրությանը կարելի է տարբեր տեսանկյուններից մոտենալ: Ն. Ս. Տրուբեցկոյը նպատակահարմար է գտնում ունենալ երկու գիտակարգեր (ըստ խոսքի և լեզվի միավորների տարբերության) և առաջարկում է տեղամիևների հետևյալ գործածությունը. «խոսքի հնչյունների մասին տալով մեկը կանխահանգը հնչյունաբանություն, իսկ լեզվի հնչյունների մասին ուսմունքը՝ հնչյութաբանություն»⁷:

Հայ լեզվաբանության մեջ միջադեպային фонология (фолемастика) phonology անվանումների դիմաց ստեղծվեց դրանց համարժեք հնչյութաբանություն տերմինը⁸:

Հնչյունաբանություն և հնչյութաբանություն տերմինների գործածության հարցում մեզանում որոշ տարբերություն է նկատվում: Այս հրեությունը պրոֆ. Էդ. Աղայանը հետևյալ կերպ է բացատրում. «...ըստ որում այդ բանը (երկու բառերի միջև առանձնացումը— Լ. Ղ.) հաճախ արվում է տեղամիևաբանական շփոթից խոստովելու համար, հայերենը հնարավորություն է տալիս առաջ երկուսի միասնությունը պահպանելու. մենք հնչյունաբանության անվան տակ միատարրում ենք հնչյունախոսությունը, որը համապատասխանում է ֆունկտիկալին և հնչյութաբանությունը»⁹:

Հնչյունաբանության մյուս ճյուղի անվանման համար գործածվում է պատմական հնչյունաբանություն կամ հնչյունախոսություն տերմինը: Այդ երկու տերմինները որոշ պայմանականություն տենեն, քանի որ այնքան էլ ճիշտ չեն կոդմոնորոշում: Նախ ինչու՝ պատմական հնչյունաբանություն: Տվյալ տերմինի փաստական վերաբերությունը ժողովրդի և ազգի, որ լեզվաբանության մեջ առաջ կարգի անվանումը կրող հնթաբառերի տակ քննվում են նաև համաժամանակյա հնչյունախոսությունները: Նվ բացի այդ, ինչու՝ միայն հնչյունախոսություն. չէ՞ որ նման ուսումնասիրությունների առանցքը կազմում է նաև հնչյութների փոփոխությունը:

Այստեղ, ընդհանրապես, չի մերժվում պատմական հնչյունաբանություն տերմինը, այլ խոսքը նրա ճշգրիտ և սահմանափակ կիրառության մասին է:

Հայ լեզվաբանության մեջ հնչյունաբանություն համեմատաբար նոր զարգացող ճյուղերից մեկը, որը տարբերվում է ուսումնասիրության իր եղանակներով, կրում է փոքրատեսակ հնչյունաբանություն անվանումը:

Որովհետև ընագավառի տերմինաբանություն ճշգրիտ և հանգամանալից հետազոտությունը անպայման վաղապես է անդրլեզվի հարցի ճիշտ լուծման հետ¹⁰, Պետք է հաստատաբար բերվեն անդրլեզվի առարկան և անդրլեզվի տարրերը, միավորները: Այսպես, կարևոր է մի կողմից տարբերել հնչյութը, վանկը, երկբարբառը և այլն՝ որպես տվյալ լեզվում փրապես գոյություն ունեցող լեզ-

⁶ Տե՛ս էդ. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. Ա, գիրք 1, Երևան, 1964, էջ 43:

⁷ Տե՛ս Н. С. Трубецкой, Основы фонологии, М., 1960, стр. 9.

⁸ Այս տերմինը հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ գործածել է պրոֆ. Գ. Զառնկյանը:

⁹ էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 44:

¹⁰ Անդրլեզվի քննության մասին տե՛ս О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1969, стр. 3—9 և նույնի «К вопросу об основных понятиях метаязыка лингвистики», «Вопросы языкознания», 1961, № 5.

վական միավորները և մյուս կողմից դրանք որպես անդրլեզվի տարրեր, այսինքն՝ որպես լեզվաբանական տերմիններ:

Քանի որ գիտության ցանկացած բնագավառի կամ նրա այս ու այն բաժնի տերմինաբանությունը համակարգային բնույթ ունի, ուստի և այդ համակարգայնությունը պահպանելու համար հնչյունաբանության, հնչույթաբանության և պատմական հնչյունաբանության բաժիններին պատկանող տերմինները քննենք որոշ կարգի խմբավորումներով:

Հնչյունախոսության բաժնի (և ընդհանրապես հնչյունաբանության մյուս մասերի) տերմինաբանության մեջ նկատվում է տերմինների առատություն: Այս երևույթը նախ թացատրվում է այն հանգամանքով, որ լեզվի հնչյունների դասակարգման և համապատասխանաբար դրանց անվանման հիմքում լեզվաբանները տարբեր հատկանիշներ են հաշվի առնում և ապա՝ նայած թե հնչյունի արտաբերության ժամանակ ո՞ր օրգանի մասնակցությունն է հիմնականը համարվում: Այս բոլորին էլ, բնականաբար, գումարվում է առանձին լեզվաբանների բառակերտման ճաղակը:

Որպեսզի ծանոթանանք, թե սովետական շրջանի հայ լեզվաբանները հնչյունների տարատեսակների համար ինչ անվանումներ են գործածել, ամենից առաջ նշենք, թե ինչ հիմունքով են նրանք հնչյունները դասակարգել: Դրանով փակ պարզ միառանգ այս կամ այն խմբավորման անվանման համար նրանց գործածած տերմինները:

Հնչյունների երկու մեծ խմբավորման համար միևնույն աշխարհում էլ գործածվում են ձայնավորներ և ֆոնադալներ ավանդական տերմինները:

Ձայնավորների տարատեսակները անվանող տերմինները առանձին համակարգ են կազմում: Ըստ լեզվի տարբեր մասերի մասնակցության ձայնավորների տարատեսակները մի քանի խմբերի են բաժանվում: Յուրաքանչյուր խմբի անվանման համար հայ լեզվաբանները տարբեր տերմիններ են գործածել: Այսպես Մ. Արեղյանը գործածում է առաջաքիմք, քիմք, վերջաքիմք տերմինները¹¹, ելնելով նրանից, թե լեզվի տարրեր մասերը դեպի քիմքի որ մասերն են բաժրատում: Պրոֆ. Գ. Սևակը լեզվի տարբեր մասերն է տերմինների անվանման հիմքում դնում և ըստ այդմ էլ գործածում է առաջնալեզվային, միջնալեզվային, հտնալեզվային անվանումները¹², Գ. Ղափանցյանը վերջիններիս գուգահեռ գործածում է այլ տերմիններ՝ միջնալեզվային (միջնաքիմքային), հտնալեզվային (հտնաքիմքային), առաջնալեզվային (առաջնաքիմքային): Նա հնչյունների տեսակների անվանման հետևյալ տիպերում է ընդունում. «Հնչյունների անվանակոչությունը մեկը պիտի տանք ըստ շարժվող գործարանների կամ, ինչպես Բորուեն դե Կուրտենն էր ասում, ըստ մուրճերի (МОЛОТ) և ոչ թե ըստ զնդանների (НАКОВАЛЬНЯ)»¹³:

Հայ լեզվաբանական դրամատիկայի մեջ միևնույն աշխարհում էլ առաջնալեզվային, միջնալեզվային, հտնալեզվային տերմինները լայն կիրառություն ունեն: Սակայն ձայնավորների այս մարդի տարատեսակների բնորոշման ժամանակ հարկավոր է հաշվի առնել դրանց կազմավորման արտաբերման յուրահա-

11 Տե՛ս Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 77:

12 Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, գիրք Ա, Երևան, 1939, էջ 95 և նույնի «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», Երևան, 1955, էջ 84:

13 Տե՛ս Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 51—52:

տուակ բնույթով: Այդ հատկանիշով ձայնավորները քաղաձայններից տարբերվում են նրանով, որ առաջինների արտասանությունը ախտահար տեղայնացված է, ինչպես երկրորդներին: Տարբ. է պատճառը, որ ժամանակակից լեզվաբանության մեջ ավելի ընդունված է առաջնային, միջին, ետին շարքեր անվանումը ետնալեզվային, միջնալեզվային, առաջնալեզվային անվանումների փոխարեն¹⁴:

Ըստ լեզվի բարձրացման տարբեր աստիճանների ձայնավորների տարատեսակները մի այլ խմբավորման են ենթարկվում և դրանցից յուրաքանչյուրը համապատասխանաբար որակվում է վերին բարձրացման, միջին բարձրացման, ստորին բարձրացման ձայնավորներ տերմիններով: Հայ լեզվաբանության մեջ այս տերմինների գործածության հարցում համարյա տարբերություն չի նկատվում:

Հր. Աճառյանը ձայնավորների տարատեսակների մի խմբի համար գործածում է աշակողմյան փամբմային, հետաակողմյան փամբ կատակյին, խառն ձայնավորներ անվանումները¹⁵:

Բաղաձայնների տարատեսակներն անվանող տերմինների համակարգն ավելի բարդ է: Մ. Աբեղյանն ասում է, թե Վայտք է նկատի ունենալ, որ զանազան հեղինակներ այս վամ այն բաղաձայնը տարբեր ձևով են վերցնում, նախելով թե այդ բաղաձայնի արտաբերությանը մասնակցող գործարաններից որին ավելի մեծ նշանակություն են տալիս¹⁶:

Շրթնային տարատեսակների համար Աբեղյանը գործածում է աստամնաշրթնային, երկշրթնային անվանումները: Բաղաձայնների մյուս տարատեսակների համար՝ լեզվային, քմային կամ առաջաքմային, բերանային, ռնգային, կատակյին կամ վերջաքմային, հագագային բաղաձայններ անվանումները¹⁷: Պրոֆ. Գ. Սևակի աշխատություններում այս տարատեսակները անվանող տերմինները վարգավորված և ավելի հստակ են գործածված¹⁸: Գ. Ղափանցյանը տեղ է տալիս նաև պալատալ, աստամնաքմաքային կամ աստամնալեզվային բաղաձայններ անվանումներին¹⁹:

Հր. Աճառյանը այդ տերմինների կապակցությունը նկատել է. «նորագույն ձայնաբանները իբր հենակետ ընդունելով ոչ թե քիմքը, այլ լեզուն, սրա համեմատ էլ անվանում են այդ բաղաձայնները»²⁰: Նա չի ընդունում «նոր հրնչունաբաններին» կիրառած առաջնալեզվային (սրա փոխարեն նա գործածում է ծայրալեզվային), միջնալեզվային, ետնալեզվային տերմինները, փոխարենը առաջարկում է իր տերմինները. «Այս զանազան ձևերով արտաբերված հրնչունները՝ համաձայն քիմքի վրա իրենց հպման կետի կոչվում են աստամնային (dental), կապակյին (alvéolaire), քմակալ (palatal), կատակյին (velaire)»²¹, ժամանակակից հայ լեզվաբանության մեջ այս բոլորը չեն գործածվում:

¹⁴ Տե՛ս է դ. Ա ղ ա յ ա ն, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 135:

¹⁵ Տե՛ս Հր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., էջ 111:

¹⁶ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 81:

¹⁷ Նույն տեղում, էջ 81—84:

¹⁸ Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, գիրք Ա, Երևան, 1939, էջ 97—98 և նույնի «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», Երևան, 1955, էջ 83—87:

¹⁹ Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 60:

²⁰ Հր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., էջ 161:

²¹ Նույն տեղում:

Բաղաձայններն ըստ արտաբերության եղանակի երկու հիմնական խմբի են բաժանվում. շփական (տևական) և պայթական (վայրկենական)²²։ Ըստ ձայնի պարունակության՝ մի քանի խմբի՝ ձայնորդներ, ձայնեղներ, խուլեր։ Ձայնեղի փոխարեն Հր. Աճառյանը գործածում է թրթռոն տերմինը։ Ձայնեղների տեսակներին տալիս է կիսաթրթռուն, շնչեղ թրթռուն, խուլ (խլացած) թրթռուն անվանումները, իսկ խուլերի տեսակներին՝ միջախուլ (medio-sourde), շնչեղ խուլ և այլն²³։

Հնչյունաբանության վերաբերյալ եղած ուսումնասիրություններում միևնույն ժամ բաղաձայնները դասակարգվում են մի ալ սկզբունքով ևս՝ ըստ փրենց կազմության։ Այս հանգամանքի հաշվառմամբ բաղաձայնները լինում են պարզ և բարդ։

Սակայն մերկայումս հնչյունների այդպիսի տեսակների (պարզ և բարդ) առանձնացումը և հետևաբար ճշգրիտ հնչյուն տերմինը որոշ վերապահություններ է ընդունվում. «Ինչպես ցույց են տալիս փորձառական ուսումնասիրությունները, պայթականների այդ ճշգրիտությունը հետևանք է ոչ թե փակապես մի պայթականի և մեկ շփականի միացման, այլ արտասանական չորհրդանշանների»²⁴։

Հնչյունների ձևահնչյութաբանական տարատեսակները (այստեղ նկատի է առնվում հնչյունների տարատեսակները բառի և վանկի կազմում) անվանող տերմիններից են՝ վանկարար (վանկային) հնչյուն, անվանկարար (ոչ վանկարար) հնչյուն, շեշտավորված (շեշտակիր) ձայնավորներ, շեշտավորված ձայնավորներ և այլն։

Հնչյունների տարատեսակներն անվանող տերմինները կարելի է խմբավորել նաև ըստ արտասանական ապարատի գործունե, պատիվ, գործունե-պատիվ օրգանների անոսների։ Այսպես.

ա) Գործուն օրգանի անոսով՝ շրթնային, լեզվային (սառնալեզվային, միջնալեզվային, հտնալեզվային), լեզվակային բաղաձայններ և այլն։

բ) Պատիվ օրգանի անոսով՝ լորանային, միջատամնային, քմային, առաջնաքմային, հտնաքմային, ատամնաքմային, փակորդային, երակային բաղաձայններ և այլն։

գ) Գործուն-պատիվ օրգանների անոսով՝ երկշրթնային, շրթնատամնային, լեզվատամնային, լեզվաքմային բաղաձայններ և այլն։

Հնչյունից ավելի մեծ միավորը վանկն է։ Լեզվաբանական գրականության մեջ վանկ բաղադրիչով կազմված բաղադրիչով տեղմիններ են գործածվում, որոնք բնորոշում են վանկի այս կամ այն տարատեսակը՝ երկար և կարճ վանկ, վանկի երկարություն, վանկի կարճություն, վանկի հնչեղություն, բաց վանկ, փակ վանկ, անշեշտ վանկ, շեշտավոր վանկ, նախաշեշտ վանկ և այլն։

Մի վանկի մեջ վանկաբար և ոչ վանկաբար ձայնավորների միացումից կազմված հնչյունախումբը կոչվում է երկբարբառ։ Բացի սրանից, գործածական են մենաբարբառ, եռաբարբառ և բաղադրաբար տերմինները։

Պրոֆ. Գ. Սևակը ժամանակակից հայերենի հնչյունների որոշ կապակցու-

²² Փորձառական հնչյունաբանության մեջ բաղաձայնների մի տեսակը որակվում է ճպակեղ (смычные, obstruent) տերմինով։

²³ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 156—157։

²⁴ Է. Գ. Աղայան, նշվ. աշխ., էջ 146։

թյունը առարբերում է երկբարբառներից և դրանց իրավասցիորեն առաջիս է երկհնչյուն կամ երկծայն անվանումը²⁵։

Երկբարբառների, երբալոբառների տեսակներին անվանումներ տալիս նկատի են առնվել մի քանի հանգամանքներ։ Այսպես, վանկարար հնչյունի դիրքի հաշվառմամբ դրանք առարբերակվում են բարձրացող և իջնող երկբարբառ տերմիններով։ Ըստ վանկարար ձայնավորի բնույթի անվանվում են երկար և կարճ։

Արտահայտության պլանի ձերոդ միավորը որակվում է հնչյունական բառ (фонетическое слово, phonetic word) տերմինով։ Վերջինս բնորոշում է բառի հնչյունական ամբողջական ձևավորվածությունը իր նախահարներով և վերջահարներով (շեշտադուրկ բառեր)։ Պրոֆ. Գ. Զահոսկյանը այս միավորը բնորոշում է հայերենի համար ավելի հարմար՝ հնչաբառ տերմինով²⁶։

Նախահար և վերջահար տերմինները Մ. Աբեղյանը գործածում է օտարլեզվյա проклитика (proclitic) և энклитика (enclitic) անվանումների իմաստներին համարժեք²⁷։

Շեշտի հնչյունաբանական և ձևահնչույթաբանական տարատեսակներն արտահայտող տերմիններից կարելի է հիշատակել՝ ուժգնության, քանակական կամ երկար, իջնող, բարձրացող շեշտ, գլխավոր, երկրորդական, անշարժ, շարժական շեշտ և այլն։

Վերահայտության մյուս միավորներն անվանող տերմիններից են՝ ելեջավորում (եթեջ)²⁸, դադար (ավարտային, բառային, սահմանային, շարույթային դադար), կցույթ²⁹ (стык, juncture) և այլն։

Հայ լեզվաբանության պատմության մեջ հնչյունի և հնչույթի տարբերական նախապատվությունը պատկանում է Գ. Ղափանցյանին և Գ. Սևակին։ Գ. Ղափանցյանը հնչույթը դիտում է որպես հոգեբանական երևույթ՝ այս հարցում հետևելով իր ուսուցիչ, լեզվաբանության պատմության մեջ հնչույթի տեսության հիմնադիր Բ. դե Կուրտենին³⁰։ Նա գործածում է «ֆոնեմա» և այս հասկացության համար հայերեն համապատասխան տերմին չի առաջարկում։

Պրոֆ. Գ. Սևակը հայ լեզվաբանության պատմության մեջ առաջին անգամ այս հասկացության համար կիրառեց հայերեն համարժեքը³¹։

Պրոֆ. էգ. Աղայանը Ն. Ս. Տրտբեցկոյի առաջարկած հնչույթի գործառական սահմանումը ընդունում է վերև մասնավորապես լեզվաբանական բնորոշում և միաժամանակ գտնում է, որ իմացաբանական տեսակներից դրանով չի կարելի բավարարվել։

Պրոֆ. Գ. Զահոսկյանն իր աշխատություններում նպատակ չի դնում տահմանել հնչյուն և հնչույթ հասկացությունները, քայքայ հայերեն այդ տերմինները նա է ամենից հետևողական կիրառում³²։

25 Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 102 և նույնի նշվ. աշխ., էջ 90։

26 Գ. Զահոսկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 111։

27 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1933, էջ 29—30։

28 Պրոֆ. էգ. Աղայանն առաջարկում է ելեջավորում և ելեջ տերմինները տարբեր իմաստով կիրառել։ Տե՛ս Պարարի բերականություն, էջ 27։

29 Տերմինը Գ. Զահոսկյանին է։ Տե՛ս նշվ. աշխ., էջ 122։

30 Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 43։

31 Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939, էջ 93։

32 Տե՛ս Գ. Զահոսկյան, նշվ. աշխ., և մյուս աշխատությունները։

Միևնույն հնչույթի հավասարարժեք տարբերակները լեզվաբանության մեջ անվանվում են аллофона (allophone) կամ вариант фонемы (phoneme variant). Այս անվանումների դիմաց հայագիտության մեջ կիրառվում են հնչույթի տարբերակ և ենթահնչույթ տերմինները (վերջին անվանումը նախընտրում է պրոֆ. էդ. Աղայանը)³³,

Հնչույթի տարբերակների փոխադրեցության հաշվառմամբ, լեզվաբանական այդ միավորները որակված են դիրքային տարբերակներ (позиционные варианты) և փոխադրեցական տարբերակներ (комбинаторные варианты) տերմիններով:

Եամանակակից հնչույթաբանության մեջ գործածվող архифонема (archiphoneme) տերմինը հայ լեզվաբանները թարգմանել են գերհնչույթ բառով:

Հնչույթաբանական մյուս հիմնական հասկացություններն արտահայտող տերմինները թարգմանվել են հայերեն հետևյալ համարժեքներով՝ տարբերակիչ (տարբերիչ) հատկանիշ վառ հնչույթային հատկանիշ, հավելական կամ լրացուցիչ (ինտեգրալ) հատկանիշներ և այլն:

Հնչույթների տարբերակիչ տարբերի հակադրությունը ներկայացվում է երկակի հակադրություններով: Ցակոբսոնի և նրա հեղինակակիցների՝ աշխարհի բոլոր լեզուների համար առաջ քաշած հնչույթների տարբերակիչ տարբերի տասներկու զույգ հակադրությունները անվանող տերմինների դիմաց պրոֆ. էդ. Աղայանը առկա է դրանց հայերեն համարժեքները՝ ձայնավորություն - ոչ ձայնավորություն, ընդհատականություն - անընդհատականություն և այլն³⁴:

Պրոֆ. Գ. Զահոսկյանը հնչույթային մի շարք հատկանիշներ որակում է ապաշնչեղություն, շնչեղ խլություն, լիաձայնություն, քմայնացածություն, շրթնայնացածություն և այլ վարդի տերմիններով³⁵:

Հնչույթաբանության մեջ այս վարդի տերմինների անվանվելու պայմանավորված է լեզվաբանության երկու գիտակարգի (հնչյունաբանության և հնչույթաբանության) միջև եղած անհրաժեշտ կապով:

Հնչույթային հատկանիշները սոսկ տրամաբանական հասկացություններով բնորոշելը դեռ բավարար չէ, սովյալ դեպքում տրանք պետք է հնչյունաբանական հասկացությունների հետ վառի մեջ դնել, իսկ հնչույթների որոշակի հատկանիշների մասին տեղեկություն վարող է տալ միայն հնչյունաբանությունը, որի հասկացություններն արտահայտող տերմինները պետք է որ գործածվեն հնչույթաբանության բնագավառում:

Հնչույթների տարբերակիչ հատկանիշները վերլուծությունը կատարվում է նվազագույն հակադրությունների միջոցով:

Հնչույթաբանական հակադրություն և նրա տեսակներն անվանող տերմիններն են. ոչ լծորդական կամ մեկուսացված (изолированное, isolated) և լծորդական (пропорциональное п., proportional op.), մեկանիշ (одно-

³³ է. դ. Աղայան, լեզվաբանության տերմիններ, էջ 183:

³⁴ Այս մասին մանրամասն տե՛ս է. դ. Աղայան, Գրաբարի քերականություն, էջ 193—196:

³⁵ Տե՛ս Գ. Զահոսկյան, Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 65—80:

мерное, bilateral), բազմաձև (многомерное, multilateral), աստիճանական (градуальное, gradual), ոչ աստիճանական հակադրություն և այլն:

Հակադրությունների առաջացման հետ կապված լեզվաբանության այս բնագավառում առաջ է քաշվել հնչույթաբանական դիրքի (фонологическая позиция, phonological position) դադարավարը: Ն. Ս. Տրաբեցկույը տարբերում է երկու կարգի դիրք, դրանք անվանելով չեզոքացման (п. нейтрализации, р. of neutralization) և ուժեղության դիրք (п. релевантности, р. of relevance) տերմիններով³⁶:

Ժամանակակից հնչույթաբանական գրականության, այդ թվում և հայ լեզվաբանության մեջ, դիրքերի այս կարգի անվանումները հաճախ փոխարինվում են թույլ, չեզոք կամ ոչ հնչույթային դիրք, ուժեղ կամ հնչույթային դիրք տերմիններով³⁷: Էդ. Աղայանը առաջերորդ է երրորդ փարզի դիրք ևս և այն կոչում է բաղադրված:

Հնչյունափոխության տարատեսակները անվանող տերմինների դասակարգումը կապված է մի շարք դժվարությունների հետ: Նախ՝ դեռևս վերջնականապես չի ճշտված հնչյունափոխական երևույթների ուսումնասիրության տեղը լեզվաբանության բաժիններում և նման երևույթների քննությունը կատարվում է նաև լեզվաբանության մյուս բաժիններում (ձևաբանության, բառակազմության): Դրա համար էլ ժամանակակից լեզվաբանության մեջ առաջարկվում է միջակա բաժնի՝ ձևահնչույթաբանության առանձնացման անհրաժեշտությունը: Եվ երկրորդ՝ հնչյունափոխության զանազան երևույթները բացի տարբեր մոտեցումներով քննելուց, լեզվաբանները դրանք առաջեր աստիճանի մասնատման են ենթարկում: Իսկ այս բոլորը, բնականաբար, անդրադառնում է տերմինաբանության վրա, տերմինների առատությունից բացի առաջանում են տերմինազործածության տարբերություններ:

Պրոֆ. Գ. Աևսկը բոլոր լեզուների մեջ ընդհանրացված և շեշտի հետ կապ չունեցող հնչյունափոխության երևույթները պայմանականորեն անվանում է ընդհանրական հնչյունափոխություն, իսկ փոփոխությունների մյուս տեսակները, որոնք կապված են շեշտի հետ, ժամանադրական հնչյունափոխություն³⁸:

Մյուս լեզվաբանները ժամանակի գործոնը հաշվի առնելով հնչյունական փոփոխությունները տրատկում են համաժամանակյա հնչյունափոխություն և պատմական հնչյունափոխություն տերմիններով:

Առաջին կարգի հնչյունափոխությունները լեզվաբանները քննորոշում են դիրքային և փոխադրեցական հնչյունափոխություններ ընդհանուր անվանումներով: Վերջին տերմինի փոխարեն պրոֆ. Գ. Զահուկյանի աշխատություններում հանդիպում ենք մի այլ անվանման՝ զուգորդական հնչյունափոխության: Պատմական հնչյունափոխության անվանման փոխարեն լեզվաբանները նախընտրում են վերառել ընդհանուր պատմական հնչյունափոխություն տերմինը: Գ. Ղափանցյանը գտնում էր, որ հնչյունափոխության սոսկ «պատմական» անվանումը պայմանական է, քանի որ այդ վարդի փոփոխությունները ընդհան-

³⁶ Ն. Ս. Տրաբեցկույ, նշվ. աշխ., էջ 86:

³⁷ Տե՛ս էդ. Աղայանի և Գ. Զահուկյանի նշվ. աշխ.-ները և Ա. Արամյան, Ժամանակակից հայերենի ձայնավորները, Երևան, 1962:

³⁸ Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, գիրք Ա, Երևան, 1939, էջ 105 և նույնի «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», Երևան, 1955, էջ 93:

նուր և անհրաժեշտ բնույթ են կրում: Այս տեսակետն է ընդունում նաև պրոֆ. Է. Դ. Աղայանը³⁹:

Հր. Աճառյանը հնչյունափոխության երևույթները երեք մեծ խմբի է բաժանում, դրանք անվանելով առաջատվական, անմիջական, նմանողական ձայնափոխություններ⁴⁰:

Հնչյունափոխության տարատեսակներն անվանող առնմանություն և տար- նմանություն տերմինների կիրառության հարցում սովորական շրջանի հայ լեզվաբանների մոտ մասնակի տարբերություն է նկատվում: Այսպես, Մ. Աբեղ- յանը և Գ. Սևակը նախընտրում են գործածել այս տերմինների կարճ ձևերը՝ առնմանում, տարնմանում⁴¹: Գ. Ղափանցյանը նախապատվությունը տալիս է օտար տերմիններին, շնայած միևնույն ժամանակ գործածում է դրանց հայե- րեն համարժեքները: Հր. Աճառյանը գործածում է համանմանություն, տար- նմանություն ձևերը:

Հնչյունափոխության այս երևույթների տարատեսակները բնորոշող մաս- նակի և լիակատար առնմանություն-տարնմանություն, առաջընթաց և ետըն- թաց, առնմանություն-տարնմանություն տերմիններից բացի հայ լեզվաբանա- կան գրականության մեջ գործածվել են նաև թերի առնմանում-տարնմանում, լրիվ առնմանություն-տարնմանություն:

Հր. Աճառյանը առաջընթաց և ետընթաց տերմինների փոխարեն գործածում է առաջատվական (progressive) և հետադարձ (regressive) համանմանու- թյուն անվանումները: Առնմանության մյուս տարատեսակները որակում է հեռակալ տերմիններով՝ ամբողջական (total) և մասնակի (partielle):

Հնչյունափոխական մի շարք երևույթներ մեր լեզվաբանական գրականու- թյան մեջ բնորոշված են դրափոխություն (հնչյունների ետևառաջություն), հնչյունների կորուստ, հնչյունների ավելացում (հավելում), հնչյունի կրկնու- թյուն, հնչյունների ծագում, քաղարկություն, ամփոփում տերմիններով:

Պրոֆ. Գ. Զահեդյանը ձայնավորների թուլացում տերմինը գործածում է редукция (reduction)-ին համարժեք⁴²:

Ձայնդարձ կամ հնչյունական հերթադալություն տերմինները լեզվա- բանական գրականության մեջ մեծ մասամբ կիրառվում են որպես նույնատիպ- ներ: Պրոֆ. Է. Դ. Աղայանը տերմինների նույնատիպությունից խուսափելու հա- մար, դրանց իմաստների մեջ թեթև ճշգրտում է կատարում. «Մեր կարծիքով լավ կլիներ ձայնավորների համար գործածել ձայնդարձ, իսկ բաղաձայն- ների համար՝ հերթադալություն»⁴³:

Аналогия (analogy) տերմինի դիմաց հիմնականում գործածվել են հա- մաբանություն, նմանակություն հայերեն համարժեքները: Որոշ շրջանում հայ լեզվաբանության մեջ ապրածված էր նաև այս տերմինի օտարալեզվյան ձևը: Հր. Աճառյանը կիրառում է նմանաբանությունը:

39 Տե՛ս Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 90: Է. Դ. Աղայան, լեզվաբանության ներածություն, էջ 203:

40 Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 679:

41 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 103, Գ. Սևակ, նշվ. աշխ.-ները, առաջին հրատ., էջ 106—107, երկրորդ հրատ., էջ 94—95:

42 Տե՛ս Գ. Զահեդյան, նշվ. աշխ., էջ 53:

43 Տե՛ս Է. Դ. Աղայան, նշվ. աշխ., էջ 198:

լեզվաբանության մեջ ընդհանուր պատմական հնչյունափոխությունների մի մասը որակում են տեղաշարժ պայմանական տերմինով:

Այսպիսով, հայերենի հնչյունաբանական տերմինաբանության զարգացումը իրենից ներկայացնում է նոր տերմինների համալրման և հների (հհարկե որոշ փարգի) իմաստի ճշգրտման մի միասնական գործընթաց: Բայց և այնպես լեզվաբանության այս բաժնի (ինչպես նաև մյուս բնագավառների) տերմինաբանությունը դեռևս կարիք ունի փարգավորման և միասնականացման՝ տերմինների լիմաստի ճշգրտում, նույնանիշության, բազմիմաստության վերացում, տերմինի ազդային ձևի հնարավորին չափի պահպանում, տերմինացվող հատկացության հստակ սահմանում և այլն: Այս առաքարեզում լուրջ արդյունքների փառերի է հառնել միայն մեր լեզվաբանների համատեղ աշխատանքի շնորհիվ:

ФОНЕТИЧЕСКАЯ ТЕРМИНОЛОГИЯ В АРМЯНСКОМ СОВЕТСКОМ ЯЗЫКОЗНАНИИ

Л. О. КАЗАНЧЯН

Р е з ю м е

Фонетическая терминология, как и любая другая, имеет системный характер. Исходя из этого, анализ фонетической терминологии проводится с учетом системных отношений. В частности, выделяются следующие разделы: а) фонетика, б) фонология, в) историческая фонетика. Каждый из названных разделов подразделяется на отдельные подсистемы терминов.

Подробная характеристика терминов, обозначающих фонетические и фономорфологические разновидности звуков, основные понятия фонологии и ряд других фонетических понятий выявили системные отношения между этими разновидностями.